ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՄ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏՄԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՆԴԱՄԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ, ՈՐ Ի ԿՈՒՓԵՐԹԻՆՈ, ԱՄՆ

Տարիներ առաջ, երբ բոնութիւններից, սովից ու հալածանքներից ուժասպառ մեր ժողովրդի զաւակունք պանդխտութեան ցոյլն ի ձեռին ճամփայ ընկան դէպի հեռաւոր երկիրն Ամերիկա, դժուար էր ասել, թէ որքան ժամանակ հայու հոգին ու նկարագիրն անեղծ կը պահպանուէր քաղաքակրթութեան հզօր ու ամենայն ինչ համահարթեցնող այդ օրրանում:

Փառք եւ գոհութիւն ենք վերառաքում առ Աստուած, որ գաղթական մեր զաւակունք Ամերիկայի հողի վրայ կառուցեցին առաջին եկեղեցիները, բացեցին առաջին դպրոցները՝ ամուր հիմերը դնելով հայապահպանութեան նուիրական առաքելութեան:

Այսօր Դուք՝ հաւատարիմ որդիք Ձեր հայրերի, հայրենասիրութեան ու եկեղեցաշինութեան շնորհների նո՛ր արծարծումով գալիս էք հաստատելու, որ անկոտրում է Ձեր սրտերում հայ մնալու եւ հայութեամբ ապրելու մեր ժողովրդի աննկուն կամքը:

Միածնէջ Մայր Աթոռից ուրախութեամբ ողջունում ենք Ձեզ ԱՄՆ Արեւմտեան թեմի թեմական պատգամաւորական ժողովի պատուարժան անդամներիդ, որ համախմբուած Կուփերթինոյի նորակառոյց Սուրբ Անդրէաս եկեղեցւոյ մէջ բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վահէ արքեպիսկոպոս Յովսէփեանի առաջնորդութեան ներքոյ, որպէս նուիրեալ ու հաւատարիմ զաւակունք Ձեր աստուածասէր հայրերի, ծառայութեան բոլորանուէր ոգիով, միասնական ջանքերով հանրագումարի էք բերում անցեալ տարուայ ձեռքբերումները եւ ծրագրում գալիք տարուայ գործունէութիւնը:

Արդարեւ, «ծառայք բարի եւ հաւատարիմ էք Տեառն», քանզի ամերիկահայոց ազգային-եկեղեցական կեանքում եւ հայրենիքում Ձեր անհուն սիրոյ դրոշմը կրող բազմաթիւ իրագործումներ ունէք, որոնք անժխտելի վկայութիւններն են Ձեզ ծնող

ժողովրդին ու Ձեզ սնող Մայր Եկեղեցուն, Ձեր ունեցած արժէքներից պատուականագոյնն ընծայելու:

Միրելի զաւակունք Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ.

Գոհունակութեան խորը զգացումով ենք հիշում հայրենասէր ու եկեղեցանուէր Ձեր ոգու պոռթկումը, որը Ձեզ մղեց գործուն նախաձեռնութեամբ Մտեփանաւանում հայ մանուկների համար դպրոց հիմնել, որբերին Ձեր իսկ կառուցած որբանոցներում հարազատի ջերմութեամբ պարուրել, կարիքաւոր ու ծնողազուրկ երեխաներին, ապաքինման կարօտ մարդկանց սատարել Ձեր հովանաւորած հիւանդանոցում և Արցախում հնչած ազատագրական կոչնակին Ձեր հայրենակարօտ արձագանքը խառնել:

Բարձր գնահատելով ազգային-եկեղեցական մեր կեանքում առկայ բազմաթիւ մարտահրաւէրներին քաջաբար ընդառաջ ելնելու եւ զոհողութիւնների յանձնառութեամբ մեր ժողովրդի ու մեր Եկեղեցու ապագան կերտելու ճանապարհին «բարուօք պատերազմն պատերազմելու» Ձեր չնուազող վճռականութիւնը՝ Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ օրհնութիւն Հայրապետական եւ Լուսաւորչեան հաւատոյ մշտավառ կանթեղի ցոլքերով լուսաւորուելու բիւր բարեմաղթանքներ:

Աղօթքով առ Բարին Աստուած վասն արեւշատութեան եւ քաջառողջութեան թեմական պատգամաւորական ժողովի անդամներիդ՝ մաղթում ենք, որ Տէրը իր Ամենախնամ Աջով հանապազ օրհնութիւն եւ անձնուէր ծառայութեան երջանկութիւն բաշխի Ձեզ, մշտանորոգ եռանդ ու կորով՝ Տիրախնամ թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանին, եւ խաղաղ ու ստեղծարար կեանք՝ Ամերիկայի պետութեան հիւրընկալ ժողովրդին:

Զլիութիւնս բարեաց անհատ եւ անսուազ արասցէ Տէր ի սրտից ձերոց այժմ եւ յաւիտեանս:

Ողջ լերուք ի Տէր՝ զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 27 մարտի
յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 22